ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2026 Թ. ՄԱՅԻՍԻ 13-15-Ը ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ

1. **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**

   Արմեն Սիմոնյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**

   ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏԸ**

   Ղազախստանի Հանրապետություն, Ք. Աստանա, 2026թ. Մայիս 13-15

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

   <<ԵՎՐՈՊԱ-ԿՈՎԿԱՍ-ԱՍԻԱ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔ>>-ի (ՏՐԱՍԵԿԱ) միջկառավարական հանձնաժողովի մշտական քարտուղարություն

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**

   <<ԵՎՐՈՊԱ-ԿՈՎԿԱՍ-ԱՍԻԱ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔ>>-ի (ՏՐԱՍԵԿԱ) միջկառավարական հանձնաժողովի 18-րդ տարեկան հանդիպմանը մասնակցելու:

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**

   Քննարկվել են ՏՐԱՍԵԿԱ միջազգային տրանսպորտային միջանցքի շրջանակներում անդամ պետությունների միջև տրանսպորտային համագործակցության զարգացմանը վերաբերող հարցեր, միջանցքի մրցունակության բարձրացման, բեռնափոխադրումների արդյունավետության և տարածաշրջանային կապուղիների զարգացման ուղղությունները: Մասնակից երկրների ներկայացուցիչները ներկայացրել են իրենց ազգային մոտեցումներն ու առաջնահերթությունները՝ ուղղված միջազգային տրանսպորտային կապերի ամրապնդմանը և ՏՐԱՍԵԿԱ միջանցքի զարգացմանը:

7. **ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ**

   Հանդիպման ընթացքում տեղի են ունեցել աշխատանքային քննարկումներ ՏՐԱՍԵԿԱ անդամ երկրների ներկայացուցիչների հետ՝ միջազգային

ավտոմոբիլային փոխադրումների, տարանցիկ երթուղիների զարգացման և տարածաշրջանային համագործակցության հարցերի վերաբերյալ: Քննարկվել են նաև փոխադրումների կազմակերպման ընթացակարգերի պարզեցման, սահմանային անցումների արդյունավետության բարձրացմանն առնչվող հարցեր:

8. ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

ՏՐԱՍԵԿԱ միջկառավարական հանձնաժողովի տարեկան հանդիպման շրջանակում ընդունվել են կազմակերպչական և համագործակցության զարգացմանն ուղղված մի շարք ընդհանուր մոտեցումներ: Կողմերը պայմանավորվել են շարունակել համագործակցությունը տրանսպորտային միջանցքի զարգացման, տեղեկատվության փոխանակման և համատեղ ծրագրերի առաջմղման ուղղությամբ:

«ՏՐԱՍԵԿԱ բազմակողմ թույլտվություն» տեխնիկական փաստաթղթի վերաբերյալ ստորագրվել է որոշում «Օգտագործողի ուղեցույց» բաժնում փոփոխություններ կատարելու մասին:

9. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Առաջարկվել է համապատասխան ստորաբաժանումների կողմից շարունակել մասնակցությունը աշխատանքային հանդիպումներին, ապահովել տեղեկատվության և փորձի փոխանակումը, ինչպես նաև նախապատրաստել ազգային դիրքորոշումները քննարկվող հարցերի վերաբերյալ: Գործընթացը կազմակերպել առկա և առցանց ձևաչափերով՝ ՏՐԱՍԵԿԱ քարտուղարության կողմից սահմանվող ժամանակացույցին համապատասխան:

Ակնկալվող արդյունքներն են՝ Հայաստանի մասնակցության ակտիվացում տարածաշրջանային տրանսպորտային նախաձեռնություններում, միջազգային համագործակցության խորացում և տարանցիկ հնարավորությունների ընդլայնում:

10. ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ, ԱՄՍԱԹԻՎ